

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան դիմել 10 րուբլ, կես տարեկան 6 րուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միայնակ հարադրատուն մէջ:

Ստամբուլում գրվում են ուղղակի

Тифлис. Редакция «Мелк»

Կարգադրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունելու է ամեն լիպով:

Յայտարարութիւնները համար գնաւորւում են

իրարանկալ րուբլ 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼՍԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ»
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, ՆԱԽԱԿ ԲԱԳՈՒՅԵ, ՆԱԽԱԿ
ԽԱՐԱԿՆԵՐ, ՆԵՐՔԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ—ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍԻՍ-
ԹԻՒՆ, ՀԱՅԵՐԸ և ՅՈՅՆԵՐԸ, ԳԵՐԱԴԱՆԻՄ, ՖԻՐԱՆ-
ՍԻՄ, ԱՆՏԻՍԻՍԻՏԵՐ, ՆԱԽԱԿ ԹԻՎԱԿԱՆՈՒԹԻՒՆ,
ԽԱՐԱԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ—ՀԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ—ՅԱՆՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ:

Կ. ՊՕԼՍԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ»

«Մշակի» ներկայ համարում տպւում ենք
խմբագրին ուղղված մի նամակ, որի մէջ
նամակագիրը ցանկութիւն է յայտնում որ
մենք քննելու Կ. ՊՕԼՍԻ մէջ նորերում
հիմնական «Տնտեսական Ընկերութեան» կա-
նոնադրութիւնը, անուանելով մեզ սկզբնա-
պատճառ այդ ընկերութեան հիմնադրու-
թեան:

Նամակագիրը մեզ շատ մեծ պատիւ է
անում, անուանելով մեզ ինչից փառա-
պաշտ ընկերութեան: Հիմարտ է մենք ոչ
թէ միայն տնտեսական մի ընկերութեան
հարց ենք զարթեցրել, բայց և շատ տա-
րբեր սրանից առաջ մեր կարողութեան
չափ նպատակ ենք և «Արարատեան» ըն-
կերութեան կազմակերպչութեան և մեր դրա-
մական հանգանակութիւններով նրա նիւ-
թական գոյութեանը: «Մշակ» էր, նոյն-
պէս, որ յարուցեց Կ. ՊՕԼՍԻ երեք ընկերու-
թիւնների միացման խնդիրը և աջակցեց
այդ միութիւնը, անդադար կրկնելով, թէ
երեք ընկերութիւններն էլ մի և նոյն նը-
պատակներ ունենալով, թուլացնում են ի-
րանց յոգեբեր ջոկ ջոկ գործերով:

Բայց ինչքան էլ նպատակած լինէինք թէ
«Արարատեան», թէ «Միացեալ» և թէ վեր-
ջուպէս «Տնտեսական» ընկերութեան կազ-
մակերպութեանը, այդ ընկերութիւնների
ինչիցառով մենք չենք կամենում ամբող-
ջութեամբ մեզ վերաբերել, մանաւանդ որ
նրանց ոչ մէկի կազմակերպչութեան ձեռ-
ամբողջութեամբ չէր համապատասխանում
մեր գաղափարին:

Մի կողմից այդ բոլոր ընկերութիւնների
ձեռ չէր համապատասխանում կատարելա-
պէս մեր համոզմունքին ու գաղափարին,
իսկ ուրիշ կողմից նրանց գործունէութեան
կենտրոնը, հակառակ մեր քարոզած մտքին,
մնում էր միշտ Կ. ՊՕԼՍԻ և ոչ թէ նոյն
իսկ Հայաստանը: Մենք անդադար կրկնում
էինք, որ ոչ մի ընկերութիւն թիւրքաց
հայերի մէջ աջակցելու չէ, մինչև որ կը
գործի Հայաստանից դուրս, փոխանակ նոյն
իսկ Հայաստանում գործելու:

Կ. ՊՕԼՍԻ մէջ նոր հիմնված «Տնտեսա-
կան» ընկերութեան կանոնադրութիւնը
մենք ստացանք քանի մի շարքով սրանից
առաջ, բայց աւելորդ համարեցինք տպա-
գրել այդ կանոնադրութիւնը մեր լրագրի
էջերում, նախ որովհետեւ մենք խնդրված
ենք նիւթերով և երկրորդ՝ որ նոյն իսկ
կանոնադրութեան տպագրելը առանց քն-
նադատութեան մեր կողմից, ոչինչ հետա-
քրքրութիւն չէր ունենայ մեր ընթերցող-
ների համար, ոչինչ օգուտ էլ չէր տալ
թիւրքաց հայերին:

Այդ ընկերութեան կանոնադրութիւնը,

գործողական, ինչպէս Կ. ՊՕԼՍԻ հայերի
բոլոր այդ տեսակ կանոնադրութիւնները, իր
նպատակի կողմից շատ անորոշ է և բուն նպա-
տակին նուիրված է ամբողջ ուժով երեսի
մէջ մի տող միայն, այն ինչ բոլոր միացած
յոգուածները մանրամասնաբար խօսում են
ընկերութեան ներքին վարչութեան կազ-
մակերպչութեան մասին:

Այսօր մենք կը բաւականանանք այս մի
քանի նկատողութիւններով՝ նոր հիմնված
ընկերութեան մասին, ուրիշ անգամի թող-
նելով ընկերութեան կանոնադրութեան ման-
րամասն քննութիւնը մի մշակված քանա-
սիրական յօդուածում:

Դարձեալ կաւեղանենք մի նկատողու-
թիւն մեր ներկայ յօդուածին. մեր խոր
համոզմունքն է, որ Թիւրքիայի հայերը
երբեք չեն կարողանայ հիմնել մի նպատա-
կայարար ընկերութիւն Հայաստանի համար,
մինչև որ իրանց գործունէութեան զիջաւոր
բանակը չեն տեղափոխի Հայաստան, այլ կը
մնան Հայաստանից հեռու, այդ երկրին օ-
տար, նրա համար խորթ Կ. ՊՕԼՍԻ մէջ,
առանց ծանաշել ուղեւորու, առանց ու-
սումնասիրել ձգտելու իրական Հայաստանի
գրական պէտքերը:

Գ. Ա.

ՆԵՐԻՔԻՆ ՏԵՍԻՍԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՅԵ

Հոկտեմբերի 19-ին

Շատ ժամանակ չէ, ինչ Բագուէ դարձել է իր
վրա մի խումբ վաշխառու հարստահարիչների,
մի խումբ արկածախնդիրների, և մի խումբ հա-
մեստ աշխատաւորների ուշադրութիւնը:
Սրանք ամենը թողած, ազգ, հայրենիք, տուն,
ընտանիք, շտապել են գալ այստեղ, մէկը ապ-
րուտով, միւսը հարստանալու միջոցները որոնե-
լու, և սրանցից ամեն մէկը պէտք է ասած, որ
իրանց նախագծի համեմատ, ինչ ինչ շար ու
բարի ճանապարհներով և նմարներով, հասնում
են իրանց նպատակին:

Առաջինները մեր վաճառական դասն է, ամե-
նաչափ բացառութեամբ. որանց մեծ մասը
հարստահարողների մի խումբ են կազմում:

Եթէ մի առ մի քննենք նրանց գործունէու-
թիւնը վաճառականական ասպարիզում, կը հա-
նենք այն եզրակացութեան, որ նրանք հրէանե-
րից գերազանցում են իրանց գործունէութեամբ:
Ուրեմն և հարկաւոր չէ երկար խօսել նրանց վե-
րաբերմամբ. բաւական է ասել որ մի երկու հա-
րիւր բուրջ մայր գումարով սկսում են մի որ և է
վաճառականական գործ, և ամենակարճ ժամա-
նակամիջոցում տասը հազարներից են խօսում:
Ուրեմն մեզք չէ նրանց վաշխառու և հարստա-
հարիւր անկանը տալ, քանի որ մի այլ ճանա-
պարհով անկարելի է այդպէս շուտ հարստանալ:
Երկրորդները արկածախնդիրներն են. այս բա-
նով են ճանաչում եւ այն հայ երիտասարդներին,
որոնց աւելի յարմար է կոչել զաթմի քանաւոր-
ներ, սրանցից մէկը իր չօր տունն է քանդել,
մի այլը Դաղստանում 9—10 տարի Դոն-Դիչոստու-
թեանը է անցուցել, միւսը կամար է եղել
Ղարաի կռոււմ. մի մէկն ասում. Այսպիսիների
թիւը այստեղ բաւական մեծ է, որոնց մէջ շա-
մախեցիք մեծամասնութիւն են կազմում:

Յիշուած այստեղի սև—քաղաք ասված քաղա-
քամանում, որ նախքի գործարաններն են գը-
տնվում, մէկը ներկարար է, մէկը թափառաչ-
ջիկ, դրանք կարող հարեցող, միւսները սկան-

դալ բարձրացնողներ, շարժառաններ, և հազար
ու մի օյնչիւններ Պարձնէք սիրելի համաքաղա-
քացիքս, որ այդպիսի ներկայացուցիչներ ունէք
այստեղ. ամենից ետ հասարակական գործերում,
ամենից առաջ շարժառաններն մէջ. օրինակ
առէք հայաբնակ քաղաքներից, և ուղղեցէք ձեռ
դաւակների փչացած բարբը:

Իսկ վերջինները, որոնք որ ճշմարիտ գոյու-
թեան կռուի մէջ են, այդ համեստ արհեստաւոր-
ներն են. արտաքին եւրոպականութիւնը որանց
մէջ աւելի քայլեր է արել, քան մի որ և է հայ
դասակարգի մէջ. հին արհեստները, ինչպէս էին
առիական գերձակութիւնը, դարձեալ ինքն, մաշ-
կակարութիւնը, գտակակարութիւնը, ոսկերչու-
թիւնը, տեղի են տալիս նոր, եւրոպական դար-
բնութեան, կոշկակարութեան, ոսկերչութեան և
այլն, թողնելով մի փոքրիկ նետը մնացող, որը
հեռու չէ այն ժամանակը երբ պիտի բոլորովին
խախտվի, և այն ժամանակ հայ արհեստաւորը
կարող պիտի լինի մրցել եւրոպացի արհեստաւո-
րի հետ: Հայ ոսկերչը ի բնէ գոյած, ներկա-
յումս էլ օր աւուր յառաջադիմութիւն է անում,
և աւելի լաւ կատարելագործվում. նրա ձեռից
դուրս են դալիս ամենանոր և գեղեցիկ ճաշա-
կով քանդակագործած, ոսկի և արծաթէ զարդեր:
Հայ կոշկակարը ազատ մրցում է գերմանացի
կոշկակարի հետ. երեք տարի աշակերտելուց յե-
տոյ նա իր վարպետից վատ չէ գործում: Բագուէ
ներկայումս հինգ հարիւրից աւելի հայ կոշկա-
կար ունի, որոնցից շատերը ուրիշ գործ ու ար-
հեստով են պարագլուծւում, օրինակ տակառագոր-
ծութեամբ: Համեմատաբար տակառագործութիւ-
նը հնչում արհեստ է և օգտաւէտ, այս պատճառով
շատ ուրիշ արհեստաւորների էլ ուշադրութիւնը
գրաւել է:

Եթէ ճշմարիտ է այ. Նիկողոսեանի գրածը թէ
Կ. ՊՕԼՍԻ ոչ մի հայ կոշկակար չէ գտնվում,
Բագուէ այդ գէպը կարող է 300 ընտիր հայ
վարպետներ տալ Կ. ՊՕԼՍԻ:

Նոր արհեստներ, ինչպէս է մագաղործութիւ-
նը, ժամագործութիւնը, ներկարարութիւնը, կա-
րի մեքենայ կարկատելը, գրաշարութիւնը, եր-
կաթաթերթագործութիւնը, սեղանագործութիւ-
նը, պատկերահանութիւնը—սոքա բոլորը հայե-
րի ձեռքն են, և որ զիջաւորն է, պէտք է ասած
որ հայերը այդ արհեստները խղճմտաբար են
տանում:

Ինչպէս ասացի, դրանք միայն արտաքին կող-
մից եւրոպականացած են, իսկ ներքին կողմերը
քննես, կը նկատես, որ նոյն ասիացիներն են,
ինչ իրանց հայրենի են եղել: Որինակ, անվայել
կերպով աշակերտին ծեծ տալ, յիշող տալ, վար-
վել հետը միշտ անողորմաբար, արհեստը մի կողմ
թողած անային գործերով պարագլուծել, և այլն:
Բարեկամական խորհուրդ կը տանք, որ այստեղ
ևս օրինակ առնեն եւրոպացի արհեստաւորից,
որը յիշողների մէջ անգամ ընտրողութիւն է ա-
նում, որ մնաց ծեծելը, Բայց միթէ մենք խիղճ
չունենք, որը թելադրէ մեզ, ի բարին գործ զը-
նել իրան: Եւրոպացիներից շատ բան պիտի սո-
վորենք, բայց միթէ մենք ամեն բանի մէջ պէտք
է նրանց գիմներ սովորելու. մտածենք որ ծեծը
Ֆիդիկապէս, իսկ անվայել յիշողները բարոյա-
պէս կարող են փչացնել աշակերտին:

Մի խորհուրդ ևս այս է. շիտակ խօսք տալ և
կատարել. այդ ամեն մի հայ արհեստաւորի սը-
րազան պարտքը պիտի լինի. ինչպէս նկատվում
է, մեր մէջ շիտակ խօսք տալ ու կատարել գո-
յութիւն չունէ. մէկը մեղանից մի բան պէտք է
չինէ, նա պատուիրողին ասում է, գուցէ. Վաղը
անպատճառ պատրաստ կը լինի, բայց մի շա-
բաթ քաշ է տալիս էգուց, էգուց ասելով. այդ
լաւ. բան չէ, մինչև անգամ մեծ ամօթ:

Եւ միշտ իմ արհեստակիցներին հետ խօսակ-
ցելուս, երբ հարցրել են թէ, արդեօք Կ. ՊՕԼ-
ՍԻ երկաթագործութիւնը հայերի ձեռքն է, եւ
պարենալով պատասխանել եմ, «Ինչպէս չէ,

այնտեղ փաշայութիւնը, միւստարութիւնը, գոր-
ծարանները հայերի ձեռքն են, ինչպէս կարելի
է որ երկաթագործութիւնը նրանց ձեռքն չը լի-
նի: Բայց մեր կարծիքը սխալ է յայտնվում, այ-
նիկողոսեանի գրածի համեմատ: Այնտեղ էլ
գործարանը հայի ձեռքն է (Վալաֆեան), այստեղ
էլ, այնտեղի գործարանում էլ վարպետները
այլազգի են, այստեղ էլ, իսկ մշակը,—մշակը,
միշտ հայ է ու հայ:

Այս կողմից էլի Բագուէ գերազանց է Կ. ՊՕԼ-
ՍԻ. ինչքան այստեղ ճշմարտ են հայերը օտար
վարպետների ձեռքն, այնու ամենայնիւ հայ եր-
կաթագործը նման է այն ծաղկին, որի ծաղկելուն
արդեւ են լինում փշերը, և որը գարնան գա-
լուն պէս բացում է իր նախշուն տերևները և
նայողին զմայլացնում, այդպէս էլ նա մի օր հա-
զար շարժառանցից յետոյ, արժանանում է վար-
պետ կոչվել, և գործում է լաւ, քան շատ ուսու-
ներ և գերմանացիներ: Հայ երկաթագործներին,
համեմատելով միւս հայ արհեստաւորների հետ,
ազգային կէտից նայելով, առաջինները աւելի
գերազանցում են վերջիններից ազգասիրութեամբ
և ընթերցասիրութեամբ, որ և շատ միջկարա-
կան է: Իրրե վկայ ասածիս ճշմարտութիւնը հաս-
տատուութեամբ ասելու է, որ մի քանի տարի առաջ
ինձ աջակցեց միայն Ամիրխանի գործարանում
ժողովել 20 ր. «Արարատեան Ընկ.» օգտին, և
այն ժամանակ պէտք է ասած, որ այնտեղ հայե-
րը քիչ էին: լրագրիներ կարդալ և հայոց հար-
ցով հետաքրքրվել այդ սովորական բան է. դա
էլ շատ միջկարական է: Սրանք, մեր արհեստա-
ւորները, իրանց իղէայներ, կազմակերպված ի-
ղէայներ ունեն: Եթէ, օրինակ, հարցնում էք մի
անուս աշակերտի, «Ի՞նչու ես սովորում այդ ար-
հեստը»,—«Որ ուստա գառնամ»—պատասխանում
է նա:—«Եստոյ ինչի, շարունակում էք:—Որ հա-
յոց ազգը լուսաւորեմ, աւելացնում է աշխատող
պատանին:—Հա սիրելիս, ասում էք նրան, աշ-
խատի, որ հայոց ազգը լուսաւորես:

Հայ պատանիներ, այս փոքրիկ անուս տղայից
օրինակ առնելու էք:

Ալէքսանդր Արէւան

ՆԱՄԱԿ ԽԻՐԱԳՐԻՆ

Թիֆլիս, 9 հոկտեմբերի

«Մշակ» ինչիցառովով զարթած խնդիրնե-
րից մէկն էլ իրագործվեցաւ. «Տնտեսական միու-
թիւնը» իրագործված իրողութիւն է Կ. ՊՕԼՍԻ
մէջ:

Սակայն պէտք է աշխատել հենց իր սաղմի
մէջ չը խեղդել նրան: լրագրական յօդուածնե-
րից արդէն երևում է, որ կրկին սկսվել են տա-
րածաշնութիւններ այդ ընկերութեան կանոնադ-
րութեան, նրա կազմակերպչութեան ձեռք վրա...

Քանի որ ուսանալիքիս վրա բարոյական
պարտք կայ մասնակցել այդ ընկերութեանը մեր
դրամական օժանդակութեամբ և նպատանքերով,
կարելի է, որ այդ խնդրում ինչիցառուր, «Մշակ»
լրագիրը, յայտնի իր որոշ կարծիքը, իր պրոգրամը
կանոնադրութեան մասին, որովհետեւ ուսու-
նայ մամուլը գուցէ աւելի մօտ ծանօթ է իրա-
կան Հայաստանին ու Հայաստանցուն, իր քաղ-
մակողմանի պէտքերով, կարիքներով, քան Կ. ՊՕԼ-
ՍԻ հայ մամուլը, որ Բագուի փերում նստած,
շատ քիչ տեղեկութիւն ունի իրական Հայաս-
տանի վրա:

Յոյս ունենք, որ «Մշակը» չի զլանայ իր զօ-
րեղ միջամտութիւնը այս հարցում:

Մենք կը կցենք սրան և մի նկատողութիւն:
Ընկերութեան կանոնադրութիւնից, որ սովի-
ցաւ «Մեղու Հայաստան» լրագրի մէջ, տեղե-
կանում ենք, որ ընկերութեան կենտրոնը լինե-
լու է Կ. ՊՕԼՍԻ: Այս կէտը մենք չենք կարո-
ղանում հասկանալ: Ինչ կարիք կայ անպատ-
ճառ ընկերութեան կենտրոնը Կ. ՊՕԼՍԻ համա-

